

ԱՅՑԵԼԵԼՈՎ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԸ

Հանդիպելով մեր ընթերցողներուն կը հրամայեմք - լսելեայն հաւամութեամբ հեղինակին - հայերէն թարգմանութիւնը սոյն վերնագրով քերթուածին՝ զոր Ամերիկահայ ազնիւ Պերթա Մելքոնեան մեր վամքին այցելութեան սպաւորութեան տակ գրած է և հրատարակած անգլիերէն լեզուով «The Armenian Mirror-Spectator» շաբաթաթերթին մէջ (9 Օգոստոս 1952) Պոսթոն:

ԽՄԲ.

Ա.

Իր աջ կողմէն կը փայլին լոյսերն ահա Լիտայի
Մինչ վենետիկը հըզօր կը շողշողայ իր կողքին:
Մնցեալին՝ տուն բորտաի, արգելարան քառատունքի,
Իսկ ներկայիս Սուրբ Ղազար դարարագեղը փոքրիկ
Որ կը բազմի իր խաղաղ ծովուն վերան հանդարտիկ
Պարուրուած ցած ալիքի վերաբերուով մը նրբին,
Աղօթքներով օրհնուած, անուրջներով, յուշերով
Որ կը յուզեն մեր հոգին:

Բ.

Այդ վայրին մէջ կը գտնեն Միխիթարիչներն սպաստան —
«Վարդապետներ Ապաշխարութեան», ուսանողներ, սուրբ մարդիկ,
Առջեւն որոնց մեծութեան շնորհքի համար կը ծրուին
Առեւտուրի հսկաներ անդոյր տեպեան ի խնդիր,
Ուխտաւորներ որ խոնարհ կ'հայցեն աղօթքը անոնց,
Մեծ քերթողներ որ անոնց ձեթաստանի զով շուքին
Տակը նստած՝ կը ջանան իրենց հոգին բղբոտող
Բուռն մրրիկը նուաճել:

Գ.

Ու կը խօսին այս Հայերն լեզու մ'որ քիչ ծանօթ է,
Կը գրեն տառեր տարօրէն զոր կը կարգան քիչ մարդիկ,
«Թարգմանութեանց թագուհի» կը կոչեն այն որ կը մնայ
Նախնիքներէն սուրբ աւանդ. զայն կը պահեն գուրգուրուտ,
Իրենց լեզուն իրարու կը սորվեցնեն, քիչեր լսկ
Երկզլխանի բանալին՝ ոսկի դարէն՝ կը ջանան
Ճակատագրին դարձընել, երբ որ անցնին թուխ ամպեր
Արեւն անոնց պիտի ծնի:

Դ.

Մնոնք սպրած են վերան այս կղզեակին՝ դարերով,
Խնամքով պահած թանկարժէք ձեռագիրները ազգին,
Մամուլն անոնց ողջ աշխարհ հայ պատմութիւն կը սփռէ,
Միշտ կը հրահրեն զարթօնքի հուրը՝ մինչեւ արծարծի,
Հայաստանի սուրբ Ղազարն է որ պիտի հրամայէ
Հայութեան մնալ միշտ կանգուն՝ կորուստի վտանգն երբ սպառնայ,
Զի ամուր է զօրութիւնն անոնց՝ ոյժով կարծրացած
Աշխատանքին անպարտաս:

Ե.

Հագած զգեստներ ծածանող, ձեռքն աղօթքի գերբ ու խաչ,
Նաւամատոյց կը դիմեն այցելուներն ընդունիլ,
Զորքս սիրով կը տանին տաճար, դպրոց, տըպարան,
Ու մենարանը իրենց խոկումներու և խոստման,
Ծաղկենքիկար թանկագին մատեաններուն ձեռագիր,
Հատորներուն դասական տիեզերքի սըտածման
Ժամանակին տժգունած իրերն փայլուն կը դարձնեն,
Եւ անոնց արժէք կու տան:

Զ.

Ազգեր իրենց շուրջ կ'իյնան, և կը կանգնին ուրիշներ,
Պերճ քաղաքներ կը քանդուին, այլ շքեղներ կ'ամբառնան,
Մնգին գանձեր կը սուղուին մինչեւ յատակը ծովին,
Զարչարանքի խոցերէն կ'խեղդուին ճիչեր փոշելից,
Մնոնք աշխարհ մինչ կ'իջնեն հանդերձանքով լիհաւատ,
Յոյսի մնունքով ու սիրոյ բալասանով, առ յաւէտ,
Մարդոց աւրածն՝ Աստուծոյ այս մարդերը կը փրկեն,
Եւ ասկէ ինչ լաւ ճամբայ:

ՊԵՐԹԱ ՄԵԼԻՔՈՆԵԱՆ

Թրգմ. Անգլիերէնէ
Գ. Թ.

